

ԵԶՆԻԿԻ ԵՐԿԻ ԲՆԱԳՐԱՅԻՆ ՄԻ ՔԱՆԻ ՆՈՐ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ



13. Նոյնպէս և նոցա՝ որ մատու առ ծովում կայցեն-քանզի ոչ կարէ³³ ակն բաց³⁴ ի ցամաք գործել-քուի թէ ի ծովէ ելանիցէ (Մ 85.3, Բ 190 Բի): Քանասէրները տարակարծիք են ընդգծուած բառերի գրութեան եւ նշանակութեան, ինչպէս նաեւ «ի ցամաք գործել» բառերի հետ նրանց կազմած նախադասութեան թարգմանութեան մասին: Ա. Արքահամեանը չի ներկայացրել բոլոր կարծիքները:

Ա) Կարէ

ա) Գրութիւնը. Վենետիկի հրատարակութեան մէջ կարդում ենք «կար է», որպէս երկու բառ, «կարող է» նշանակութեամբ: Նոր Հայկազեան Բառարանի «Կերինակները» (ԲԱՅ բառայօդուածում) եւ ուրիշ բանասէրները բնդումում են «կարէ» ձեւը, որպէս «կարել» (կարողանալ) բայի ներկան: Ա. Արքահամեանը թէեւ հետեւում է Վենետիկի հրատարակութեան, սակայն թարգմանում է «կարողանալ» բայով՝ «չեն կարողանում»:

բ) Թարգմանութիւնը. Բոլոր բանասէրները այն թարգմանել են «կարողանալ» բայով: Ըստ որում Ե. Դուրեանը, Գ. Խաչատուրեանը եւ Ա. Արքահամեանը թարգմանել են յոդն: Գ. դէմքով՝ «չեն կրնար, չեն կարողանում», թէեւ բարձեւը եղակի Գ. դէմք է: Այս թարգմանութիւնը ոչնչով հիմնաւորուած չէ նրանց կողմից:

Բ) Ակն բաց

ա) Գրութիւնը. Եղնիկի ձեռադրում եւ Վենետիկի հրատարակութեան մէջ «ակնբաց» է, որին կողմնակից են Ե. Դուրեանը, Գ. Խաչատուրեանը եւ Ա. Արքահամեանը: Նոր Հայկազեան Բառարանում չկայ «ակնբաց» բառայօդուած: Միայն թէ Բառարանում Եղնիկի վերոյիշեալ նախադասութիւնը որպէս վկայութիւն է բերուած ԲԱՅ բառայօդուածում, եւ «ակն բաց» գրութեան կողքին փակազծերում աւելացուած է «կամ՝ ակնբաց»: Շմիդն ու Գալէմքեարեանը նախընտրել են «ակն բաց» գրութիւնը, որին կողմնակից է Մարքէսը (De Deo, էջ 184, ծան. 2) եւ այն ընդունել է գիտական հրատարակութեան մէջ՝ չետելով: «Կարծում ենք, որ ակնբաց բառը պէտք է հատել ակն բաց» (ծան. 644): Ընդհակառակն, Ա. Արքահամեանը չի կասկածում, որը ակնբացը մի ամբողջական բարդ բառ է» (104), առանց ասելու թէ ինչից է բխում իր ինքնավստահութիւնը:

բ) Թարգմանութիւնը. Նոր Հայկազեան Բառարանում այդ բառը, նայած անջատ կամ միասին գրութեան, բայադրուած է «բա՛ց ակն» կամ «ի բացագոյն ցամաք»: Մարքէսը նախընտրելով անջատ գրութիւնը ընդունել է Բառարանի «բա՛ց ակն» («l'oeil grand ouvert» = լայն բացուած աչք) բառատրութիւնը (De Deo, էջ 184, Փրանս. թարգմ. 1 273): Մենք կողմանը:

33 Վենետիկի հրատարակութեան մէջ՝ որին հետեւում է Ա. Արքահամեանը, «կար է»:

34 Զենազրում եւ Վենետիկի հրատարակութեան մէջ՝ «ակնբաց»:

նակից ենք այս դրութեան ու թարգմանութեան : Ա. Արբահամեանի կարծիք՝ քով, «ակնբաց» բառը նշանակում է «տեսադաշտ» : «Հսու բնագրային հանգամանքների՝ արամարանորէն մեղ թւում է գրել է նա—, որ այդ բառը նըշանակում է «տեսադաշտ», այսինքն՝ աչքի բացուածք, որն ընդգրկում է տեսաննելիքը» : Սակայն չի առում, թէ ո՞ր բառարանի կամ ուրիշ ո՞ր բնագրերի հիման վրայ :

Ի ցամաք գործել . բանահէրները տարբեր բացատրութիւններ են տուել Եղնիկի այս բառերին, որոնց հետ է կապուամ «ակնբաց» բառը : Ե. Դուրեանը ֆանգի ոչ կարէ ակն բաց ի ցամաք գործել նախադասութիւնը թարգմանել է «...որովհետեւ չեն կրնար դէպի ցամաք հասնելու ծայր մը գտնել» . Գ. Խաչատուրեանը՝ «...որովհետեւ առուներ բանալով չեն կրնար ցամքեցնել զայն», այսինքն՝ ծովը : Ա. Արբահամեանը, որ իր յօդուածում մէջ է բերել այս երկու թարգմանութիւնները, զրում է, թէ երկու բանասէրներն էլ օգտագործել են բառարանների «ակնբացել» բայի բացատրութիւնը՝ «անց կամ առուակ բացել, ինորչեր պատրաստել՝ պարտէզ կամ արտը ջրելու համար», որ սակայն «չի յարմարում (ակնբաց-ի, Մ. Մ.) վերյիշեալ գործածութեանը» : Խսկապէս, երկու թարգմանութիւններն էլ արտառոց են եւ սխալ : Սակայն ի տարբերութիւն Ա. Արբահամեանի, մէնք կարծում ենք, որ Ե. Դուրեանն ու Գ. Խաչատուրեանը «ակնբաց գործելը բառերն են դիտել իրեն «ակնբացել» բայի համանիչ» : Ա. Արբահամեանը «ի ցամաք գործելը բառերը համարել է «արտայայտութիւն» և թարգմանել «ցամաքին հասցնել, այսինքն՝ ցամաքը տեսադաշտի մէջ վերցնել, տեսնել» (104) : Եւ «քանզի ոչ կարէ ակնբաց ի ցամաք գործել» նախադասութիւնը, դիմէ է նա, «այս մօտեցմար թարգմանում է այսպէս որովհետեւ չեն կարող³⁵ տեսադաշտը ցամաքին հասցնել» :

Վերեւում արդէն ասացինք, որ ճիշդ չէ «ոչ կարէ» եղակին թարգմանել յոդնակի : Հասկանալի է, որ Եղնիկի նախադասութեան սկզբի «նոցա» յոդնակին է ազգել Ա. Արբահամեանի վրայ . «Նոյնպէս եւ նոցա՝ որ մաւա առ ծովուն կայցեն քանզի ոչ կարէ ակնբաց ի ցամաք գործել. թուի թէ ի ծովէ ելանիցէ» : Ամբողջ նախադասութիւնը փոփոխուած կառուցուածքով թարգմանելիս նա «ոչ կարէ» եղակին (ինչպէս եւ «Թուի»-ն) դարձել է յոդնակի . «Նոյնպէս էլ ծովի մօտ գտնուողները որովհետեւ չեն կարողանում տեսադաշտը ցամաքին հասցնել, կարծում են, թէ (արեւը) ծովից է ելուում» : Մինչդեռ, թէ կուղ Ա. Արբահամեանի բառային բացատրութիւններով, բնագիրը եւ քերականութիւնը պահանջում են հետեւեալ թարգմանութիւնը . «Նոյնպէս եւ նրանց («նոյնպէս եւ նոցա»), որոնք ծովի մօտ կանդնած կը լինեն («որ մաւա առ ծովուն կայցեն»), որովհետեւ տեսադաշտը չի կարող ցամաքին հասցնել («քանզի ոչ կարէ ակնբաց ի ցամաք գործել»), թւում է, թէ (արեւը) ծովից է ելուում («Թուի» թէ ի ծովէ ելանիցէ») : Ա. Արբահամեանի «չեն կարող» կամ «չեն կարողանում» թարգմանութիւնը ճիշդ կը լինէր, եթէ բնագրում լինէր «ոչ կարեն»՝ յոդնակի :

Ա. Արբահամեանը փորձել է արգեօք վերլուծել քերականօրէն «...ոչ կարէ ակնբաց³⁶ ի ցամաք գործել» նախադասութիւնն առանձին վերցրած եւ

³⁵ Ինչպէս կը տեսնենք առորեւ, Եղնիկի նախադասութիւնն ամբաջութեամբ թարգմանելիս Ա. Արբահամեանը աշխարհաբար այս բայամեր փախարինել է «չեն կարողանում» ձեւով : Այս երկու բայամերն ունեն կերպային նրերամբ : այս առանձին Եղնիկի նախադասարան աւելի յարմար է «չեն կարող» ընկամբացնայ ձեւով :

³⁶ Թէկուզ այս բառի նրա ընդունած ուղղագրութեամբ :

դունել «ոչ կարէ» բայ-ստորոգեալի քերականական ենթական, որ անպայման եկալի պիտի լինի: Քերականական այդ ենթական «ակնբաց» գոյականը չի կարող լինել, քանի որ ըստ նրա թարգմանութեան այդ բառը ուղիղ բնադիր է. «...չեն կարողանում տեսադաշտը ցամաքին հասցնել»: Նրա թարգմանութիւնն առաւել եւզ մեկնաբանութեան եւ հիմնաւորման է կարօտ, քանի որ նա ընդունել է վենետիկի հրատարակութեան «կար է» միադիմի բայաձեւը:

Վերջիշեցնում ենք, որ Մարիէսն ընդունել է «կարէ» եւ «ակն բաց» ընթերցուածները՝ դրանց տալով «չի կարող» եւ «լայն բացուած աչք» իւմաստներն ըստ Նոր Հայկազեան Բառարանի: Ամբողջ նախադասութիւնը թարգմանել է.

“De même à ceux-là aussi, qui, d'aventure, tout près de la mer se tiennent, — parce que point ne peut l'œil grand ouvert sur (terre) sèche porter son action — il semble que de la mer il sorte ...” (§ 273):

Մեզ հետաքրքրող ընդգծուած մասը նշանակում է. «...քանի որ լայն բացուած աչքը չի կարող իր աղջեցութիւնը հասցնել ցամաքին» կամ «մինչեւ ցամաք ներդործել»: Այստեղ «գործել» բայը թարգմանելիս նա նկատի է առել Նոր Հայկազեան Բառարանի «ներդործել», ազդել բացատրութիւնը, որի համար վկայութիւն է բերուած նզնիկի հենց այս նախադասութիւնը (Հատ. Ա., Էջ 576, Բ սիւն.):

Մեզ կողմնակից ենք Մարիէսի ընդունած ընթերցուածներին ու թարգմանութեանը: Սակայն հնաբաւոր եւ նաեւ նզնիկի նախադասութեան դառնուցուածքի հետեւեալ մեկնաբանութիւնները, վիճարկելի բառերի հետեւեալ ընթերցուածներն ու բացատրութիւնները.

1. Եթէ ընդունենք «ոչ կար է» ընթերցուածը, ապա այն կարելի է թարգմանել «կարողութիւն չկայ, չէ», կապել նախադասութեան սկզբի «նույա» սեռական-տրականի հետ՝ «նոյցա...ոչ կար է», եւ ամբողջը թարգմանել «նրանց կարողութիւն չկայ, չէ» բառացիօրէն, գրական՝ «նրանք չեն կարող»: Յայտնի է որ գրաբարում շատ կան նման միադիմի դարձուածքներ, որոնց բերականական ենթական մի ամբողջ նախադասութիւն է: Այստեղ քերականական ենթական «ակն բաց» («ակնբաց» թէկուզ) ի ցամաք գործելուն է: Եթէ առարկուի, թէ «նոյցա»-ն նոյն նախադասութեան «թուի» միադիմի բարյի անուղղակի ինչերն է, ապա կարելի է պատասխանել հետեւեալը. Թերեւակամ այդայս է, կամ՝ «թուի» միադիմին կարող է առանց անուղղակի խնդրի դորժածուած լինել այստեղ, կամ՝ էլ «նոյցա»-ն միաժամանակ վերաբերում է «կար է» եւ «թուի» միադիմիներին³⁷:

Մեր այս մեկնաբանութիւնն անկախ է «ակն բաց» կամ «ակնբաց» ընթերցուածներից եւ դրանց «լայն բացուած աչք» կամ «հայեացք, տեսադաշտ» բացատրութիւններից, որոնք վերջին հաշուով իմաստային մեծ տարրերութիւն չունեն այստեղ:

Մեր ենթադրաւթիւնից եւնելով՝ նզնիկի ամբողջ նախադասութիւնն այսպիսով կարելի է թարգմանել. «Նոյնակէս եւ նրանց, որոնք ծովի մօտ կանգնած կը լինեն, թւում է, թէ (արեւը) ծովից է ենում, քանի որ նրանք չեն կարող (լիրենց) լայն բացուած աչքը (կամ «հայեացքը») ցամաքին հասցնենք»:

2. Կարելի է նաեւ նախադասութեան սկզբի «նոյցա» հոլովաձեւը համարել պարագաներից (կամ «ակնբաց») անդամի յատկացուցիչը, որով «նոյցա...»

³⁷ «Նոյցա» եւ «թուի» բառերի յարաբերութեան մասին տես վերևի բացատրութիւնը:

բաց ակն» կը նշանակի «նրանց լայն բացուած աչքը» (կամ՝ տեսադաշտը): Այս գէպում տարօրինակ չեն թուայ «կարէ» ընթերցուածը եւ նախադասութեան հետեւեալ թարգմանութիւնը. «Նոյնպէս եւ նրանց, որոնք ծովի մօտ կանդնած կը լինեն, թուամ է, թէ (արեւը) ծովից է ենում, քանի որ նրանց լայն բացած աչքը (հայեացքը, տեսադաշտը) չեն կարող ցամաքին հասնել (կամ՝ հասցնել, ներգործել)»:

14. Այլ իմեն է պատճառ ամենայնի, որ ի լինելն եւ ի գոյանալ եկինց ի չգոյէ եւ ի գոյէ, որպէս երկինք վերինք եւ որ իմչ յերկինս, եւ երկինք եւ ըեւիլիք որ ի ջուրց, եւ երկիր, եւ ի մասնէ եւ ի նմա (Մ 9.17, Բ 6-7):

Ըստ Ա. Արքահամեանի, այս նախադասութիւնը ձեռագրում եւ Գ. Խաչատրեանի հրատարակութիւնից բացի միւս տպագրութիւնների մէջ «ընդգծուած մասում թերութիւն ունի» (105): «Այդտեղ վերջին եւ շաղկապն աւելորդ է՝ գրել է նաև, իսկ զայ բառի բացառական հոլովաճելը («ի գոյէ») բացայատ սիսալ է: Ճիշդը կ նախդիրով եւ հայցականով ձեւն է՝ ..եկին ի չգոյէ ի զայ: Այդպէս է թելադրում բնագրի բովանդակութիւնը («անգոյութիւնից գոյութեան եկան»):

Ա. Արքահամեանը ներկայանում է որպէս այս առաջարկի առաջին հեղինակը: Սակայն ինքն էլ է յայտնում, թէ իրենից առաջ ուրիշներն էլ են անդրադարձել այս ընթերցուածին. «Այս սիսալը ժամանակին նկատել են առաջին հրատարակիչները եւ ուղղել են Զմիւռնիայի տպագրութեանը մէջ, որը (ի՞նչը – Մ. Ա.), սակայն, երկար ժամանակ անտեսուել է»: «Եթետպայում Գ. Նահապետեանն առաջարկել է ուղղում կատարել յիշեալ ձեւով³⁸, որն ընդունելի է համարել Ե. Փէշիկեանը, սակայն չի ուղղել վենետիկեան վերջին (1926 թ.) վերահրատարակութեան մէջ» (105): Մեր կարծիքով, Ե. Փէշիկեանը ճիշդ է վարուել այդ սրբագրութիւնը հրատարակութեան մէջ չմտցնելով: Սակայն նոյնիսկ ցանկութեան դէպէում նա ինչպէս կարող էր եզնիկի 1926 թուականի տպագրութեան մէջ մտցնել Գ. Նահապետեանի (կամ Զմիւռնիայի) ուղղումը, որ նա ցընդունելի է համարել» միայն 1928-ին «Բազմավէպի» մէջ լոյս ընծայած իր յօդուածաշրուում (յատկապէս էջ 300): Այդ երկու տարեթուերը պէտք է յայտնի լինէին նաեւ Ա. Արքահամեանին:

Յօդուածագրի մէկ ուրիշ թերութիւնն էլ այն է, որ նա չի յիշեցրել վերոիշեալ սրբագրութեանն անդրագարձած բոլոր բանասէրների անունները: Նա գրել է. «Գ. Խաչատրեանը ուղղել է Բուէնոս-Այրէսի տպագրութեան մէջ»: Նա թերացել է ասել, որ Գ. Խաչատրեանն առաջինը չէ, Գ. Նահապետեանը իր «Ուղղագրութիւնք ազգային մատենագրաց» հետազոտութիւններում (1907 թ., էջ 282) առաջարկել է «եւ ի գոյ» սրբագրութիւնը, ինչպէս ուշացած առաջարկում է Ա. Արքահամեանը. Շմիդն ու Գալէմքեարեանն իրենց գերմաներէն թարգմանութեան մէջ (էջ 21, տող 27-28) լուելեայն ընդունել են այս ուղղումը, ինչպէս յայտնում է Մարիէսը, դեռ Գ. Նահապետեանից առաջ: Հետեւաբար այս բոլորին ծանօթ Մարիէսը գրել է. «Խաչատրեանը, էջ 3, հետեւել է Շմիդ-Գալէմքեարեանին» (Գիտական հրա-

38 Ա. Արքահամեանն իր յօդուածում տպագրել է Եթրին», որ հաւամար տպագրական վրիպակ է. բայց ո՞վ զիտէ. զուցէ հենց այդպէս պէտք է, իմշպէս մա զում է միշտ:

39 Ո՞ր ձեւով. արդեօք «...ի գոյ». Եթէ այդպէտ է, ապա Ա. Արքահամեանը սկզբց ներ պէտք է այիշալ մազդումքը մերկայացմէր ոչ քէ իր ամումից, այս Գ. Ղափաղնեամիքն ենդիմակութեամբ, որին, որպէս աւելի վաղ բամատէր, մա կարող էր միայն համեմակիցների լինել:

տպրակութիւն, ծան. 8) «Եթէ Ա. Աբրահամեանն ուզում էր լրիւ պատկերացում աալ ընթերցողին և...մեր բանաօիրութեան մէջ կատարուած բնադրական մի յայտնի ուղղման մասին, ապա նա ոչ մի փաստ պէտք չէ անտեսէր եւ ոչ էլ բաւարարուէր գրելով, թէ «Մարիէսը ձեռագրի եւ վենետիկեան տըպագրի սխալը պահպանել է փարթեան վերջին հրատարակութեան մէջ» (105). պէտք է աւելացնէր, որ Մարիէսը դիտական հրատարակութեան 8րդ ծանօթագրութեան մէջ պատճառարանել է այդ «սխալը պահպանելու» իր տեսակէտը, էլ չենք ասում, որ հայպէտն այդ ընթերցուածին ուշագրութիւն է դարձել եւ ուսումնասիրել այն գեռ եւս 1928ին իր “*Nomus et verbes d'existence chez Eznik de Kolb*” աշխատութեան մէջ, էջ 41-42 եւ 91:

Ա. Աբրահամեանը յայտնում է նաեւ, թէ Ե. Դուրեանը եւս, Մարիէսի նման, կողմնակից չի եղել ուղղման՝ գրելով. «Արարչութեան գործը՝ որ ի չգոյէ կ'սկզբնաւորի, կը շարունակուի նաեւ ի գոյէ: Եթէ ճիշդ է այս փարապետութիւնը, հարկ չենք տեսներ սխալ համարի ի գոյէ բարը» (105): Նկատենք, որ եկեղեցական երկու վարդապետներն էլ, որոնք կողմնակից չեն ուղղման, ստացել են աստուածաբանական խոր կրթութիւն, ուստի մեզ թըտում է, որ արարչագործութեան խնդիրներում Ա. Աբրահամեանից շատ աւելի գիտակ են: Ինչ-որ տեսութիւններով սնուած Ա. Աբրահամեանը նրանց պատասխանել է Հետեւեալ ինքնավսահութեամբ. «Եյսպիսի պատճառարանութիւնը չի կարելի հիմնաւոր համարել, քանի որ Եզնիկը խօսում է այն մասին, որ իրը, են սկզբնապէս ամէն ինչ արարչագործել է ոչնչից, անդուժութիւնից է գոյութեան բերել արարածները: Տուեալ դէպքում նա չի խօսում առարկայից առարկայ ստեղծելու մասին: Պարզ է, որ ուղղումն է ճիշդը» (105): Պարզ է, որ եթէ Ա. Աբրահամեանը Եզնիկի նախադասութիւնից վտարի «ի չգոյէ» բացառականը, տուեալ դէպքում Եզնիկը խօսած չի լինի առարկայից առարկայ ստեղծելու մասին: Այդ դէպքում մենք եւս նրա հետ կարող ենք ասել, որ «Ա, ի հարկէ, խնդրի տրամաբանական լուծումն է»: Բայց իրականանում ենք, թէ ինչ արամարանութիւն կայ նրա առածների մէջ:

Ա. Աբրահամեանը իր «տրամաբանական լուծումը» հաստատել է «Նիւթական» ապացոյցներով. «Աւակայն, -գրել է նա- գրա համար կան նիւթական ապացոյցներ, որոնք Եզնիկի հենց նոյն երկում են» (կարծէք թէ Եզնիկը մեզ հասած ուրիշ երկ էլ ունի): Եւ նա Եզնիկի այս «նոյն» երկում դըտել է նախադասութիւններ ու «Ճեւակերպումներ»⁴⁰, որոնք «այլ ճեւակերպամբ եւ բնոյթով (— Մ. Մ.), բայց մեզ հետաքրքրող մասի նոյնականութեամբ առարկաների սկզբնական արարչագործմանը վերաբերող միտքն են արտայայտում: Այսպէս՝ ...ի չգոյէ ի գոյ ածել զհասակ ամենային... ածն ի չգոյէ ի գոյ զշգոյն, եւ եցոյց յոշնչէ ինչ զշնչն...»: Ինչպէս երեւում է, յօդուածագիրը գժուարանում է հաշուուել այն մտքի հետ, որ Եզնիկը կարող է շարունակ կրկնել նոյն միտքը «այլ ճեւակերպումներով», իսկ մեզ Հետաքրքրող նախադասութեան վերջում խօսել արարածների միայն «ի չըդոյէ», այսինքն՝ անմիջականօրէն, եւ «ի գոյէ», այսինքն՝ ուրիշ արարածներից միջնորդարար կամ «միջակայ» ճեւով ստեղծման մասին: Ճիշդ է, որ յօդուածագրի ընտրած «Ճեւակերպումների» մէջ Եզնիկն արտայայտում է այն միտքը, թէ Աստուած ոչնչից ստեղծեց ամէն ինչ: Սակայն, ինչպէս Եզնիկը դրել է նոյն նախադասութեան մէջ, եւ ինչպէս ուսուցում է Աստուածաշունա-

⁴⁰ Կրկնելով նաեւ, Գ. Նախադասութեանի բերած վկայութիւնները, ուսկայն առաջ նրա մեջութը տպաւ:

չը, «Աստուած աղբիւրն է մաէն լինելութեան, ոչ միայն ոչնչութիւնից անմիջականօրէն իր ստեղծած արարածների, այլեւ այն արարածների լինելութեան, որոնք բիում են՝ Աստծու կողմից նախքան այդ ոչնչից ստեղծուած արարածներից : Այս են ցոյց տալիս Եղնիկի բերած օրինակները . ոչնչից են վերին կամ անտեսանելի երկինքը եւ ինչ որ նա պարունակում է . արդին գոյութիւն ունեցող ջրերից է տեսանելի երկինքը» : Այս բացատրութիւնները տուել է Մարիէսը իր “*Noms et verbes d'existence...*” աշխատութեան մէջ (էջ 42) եւ դիտական հաստարակութեան 8րդ ժանօթագրութեան մէջ, որի մասն լուել է Ա. Արրահամեանը կամ՝ դիտակագրար, կամ՝ դրանց անտեղեակ լինելուն պատճառով : Մարիէսը ճիշդ է նկատել, որ Եղնիկի նախադասութեան մէջ «երկինք վերինք եւ որ ինչ յերկինս» Աստծու կողմից ստեղծուել են «ի չգոյէ», իսկ «երկինք երեւելիքը ստեղծուել են ջրերից՝ «...որ ի չլուրց», սակայն դարձեալ Աստծու կողմից : Աստծի իրաւ է, որ Եղնիկի մտքի ճշգրտթեան եւ ձեռագրի «ի գոյէ» ընթերցուածի անձեռնմխնիլութեան «համար կան նաեւ նիթական ապացուցներ, որոնք հենց Եղնիկի նոյն երկում են», հենց նոյն նախադասութեան մէջ . միայն թէ պէտք էր դրանք տեսնել : Մարիէսի փաստին աւելացնենք հետեւեաները հենց Եղնիկի երկից, որոնք Եղնիկի մտքերն են եւ ոչ թէ հակառակորդների կարծիքը . «Զի այնպէս կազմեաց Աստծուած զաշխարհ . նախ զըոր հիւթան մեկնեալ արարեալ, ապա նոքաւէ յալդեաց զամենայն» : Եւ միոյ արարչի գործ է ամենայն» (Մ էջ 97, ա . 22-23) . «Որ յոշնչէն կարող եղել զցունչ մարդոյն առնել եւ պահէ միշտ կենդանի եւ անմաս, նոյն եւ զմարմինն, զոր յերկրի ստեղծ, կարող էր պահէլ կենդանի» (Մ 35-30-31, թ էջ 72) : Եղնիկի երկից գուրս կան դրա ապացուցները եկեղեցական դրականութեան մէջ . յիշեցնենք թէկուղ Աստուածաշնչի պատճաճը տաշնին կնոջ միջակայ, Ակամաի կողմից ստեղծման վերաբերեալ, որի մասին կարելի է ասել «ի լինելն եւ ի գոյանալ եկն ի գոյէ» :

Գ. Նահապետեանի եւ նրանից յետոյ Ա. Արրահամեանի կրկին նկատած «սիսալ»ի ուղղումից յետոյ Եղնիկի նախադասութիւնը կը վերածուէր հետեւեալ ձեւեի . «...որ ի լինելն եւ ի գոյանալ եկին ի չգոյէ ի գոյ»⁴¹ : Ա. Արրահամեանը փորձե՞լ է արդեօք թարզմանել կամ սմբռնել «ի գոյանալ եկին...ի գոյ» բառախաղը, որ պատիւ չէր բերի Եղնիկին : Ա. Արրահամեանն ամէն ինչ ապացուցած համարելով՝ գրել է վերջում . «Այսքանից յետոյ արդէն ոչ մի կասկած չի մնում ուղղման նշդութիւնն ընդունելու համար» (106) : Մեր ընդունած բառը փոխարինելով՝ իր հականիշով այս եղակացութիւնը վերապարզնում ենք հեղինակին :

Ա. Արրահամեանն իր դիտողութիւնների այս առաջին շարքի վերջում գրել է . «Առայժմ այսքան» : Վերջացնում ենք նրա բառերով եւ սպասում Եղնիկի երկի նրա արևելահայերէն թարզմանութեան, որ, ինչպէս մեզ յայտնի է, մամուլի տակ է . դրա ճոխ ծանօթագրութիւններից են քաղուած ու եկամուարերութեան համար տպագրուած այս 14 դիտողութիւններն ու մեկ նախանութիւնները, որոնք մեր բանասիրութեանը ոչ մի նորութիւն չեն բերում :

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՒԱՍԵԱՆ

Սէմ-Նազէր, Ֆրանս
(Չար. 3 եւ վերջ)

⁴¹ Յիշեցնենք, որ Ա. Արրահամեանը տաշարկում է Եղնիկի «եւ ի գոյէ» բառերը փոխարինել սրանով :